52. ՃԱՄԻՆ ՔԱՂԱՔԸ ԵՎ ՇՂԹԱՅԱՀԱՏ

Կըլլի, կըլլի մեկ թագավոր մի. իրան կունենա իրեք տղա, մեկ էալ աղբեար, օր էան էալ թագավոր է, ըսիմ թե մենծ աղբեարը էրզրում, պզտիկն էալ Վան թագավոր ին, ամա իրար միներ հեռու ին, իրանց իրանց բաժին էրած ին էրկիրը:

Պզտիկ աղբեարը մեկ հատ աղջիկ ունի, էալ բան չունի:

էաս թագավորը տղոցը կանչեց, ըսըց. - ես ձեզի վասիաթ մի կինիմ, ա՛յ որդիք, ձիզի չիմ կրնըր կարգեր հոսի. ես աղբեար մի ունիմ, քառսուն տարի է բաժանվեր է իմ միներ. գընցեք տեսեք, որդի՛, աղբեարս աղջիկ ունի, չունի, աղջիկ կա նե, օտըրի տի էրթըք նե. էան մեր մարդն է. իմ աղբորս աղջիկները կը բերիմ ձիզի:

Մենծ տղան պատրաստ տեսավ, ցգեց ճանփան, գնըց-գնըց. շատ գնըց, քիչ-գնըց, հասավ Վան: էաս քաղաքի չորս դին պետեն էր. 14 դուռ ուներ, գնըց էջավ խափուճու քով, օր տեսավ թագավորի տղա էր, էլավ ձինը բռնեց, դայֆե էփեց, խմցոց, ըսըց. - ինչո՞ւ էկեր իս:

- Հեռու տեղեն՝ թագավորի աղջկան՝ էկեր իմ:

- Այ որդի՛, մեղք իս, տեսեր իս պետենը, քուլլի մարդու գլոխ է: Թագավորը մեկ աղջիկ մի ունի, շատ էլ աղկեկ է, իրավունքը - թագավորութինը անցուցեր է աղջկան. աղջիկը կըյրիճ մարդ կուզե: Վեվ օր աղջիկը խոսացնե, խնդացնե իրեք հեղ. էնոր տի առնե, օր իրեք օր իրուր վրա գնըց, չի խոսեցոց, ընու գլոխը կը կըյրե. իրեք գլոխ մնացեր է օր պետենը գլոխ ըլլի. կըյրի՛ճ տղա, դու էալ որ չկրցար խոսացուցիր, քու գլոխն էալ կը կըյրե, մեղք իս, քովը մի էրթըր:

էլավ գնոց թագավորին գլոխ տվեց. պապուն գիրը հանեց ծոցուն, տվեց. օր կարդաց՝ պագեց գիրը ու դրեց ծոցը*: Գրին մեջ գրեր էր, «օր աղջիկ ունիս, տի տաս իմ տղոցը»:

- Այ որդի՛, ընդունեցի աղբորս թուղթը, - ըսոց, - ինձիս մեկ աղջիկ կա. թագավորութինս տվեր իմ աղջկանս. մեղք իս, քու հետ չխոսիր, գլոխդ կը կըյրե:

- Անկարելի բան է, գլոխս էալ զինե՝ տի տեսնըմ:

էլավ գընոց. տեսավ օ աղջիկը պապուն թուրը վրան կապեր՝ նստեր է օդան. մտավ ներս, ըսոց. - Բարև քիզի, ամի՛ օղլի:

Աղջիկը բարևը չառավ:

- Ես քու ամի օղլի իմ, ինչո՞ւ իմ հետ չիս խոսիր:

Իրեք օր գընոց, էկավ, չկրցավ զրուցընել տար:

Աղջիկը էսոր գլոխը կըյրեց. մնոց էրկու գլոխ:

Տղան չէկավ, թագավորը կուլա, կը մտածե, էադ էրկու տղան կըսին. - Պապի՛կ, ինչո՞ւ կուլաս:

- Ճանփեցաք օր բանպակի ջուրը բերե, ջրիք. գընոց չեքչեքու բերեց. հեմի բանլըկեն էլաք, հեմի աղեն էլաք:

Օրթանճա տղեն էլավ, պատրաստ տեսավ, աղբորը պես գընոց. ընու էալ գլոխը կըյրեց, դրեց պարիսպը:

Աղբեարը ամոթուն գիր չճանփեց. խապար չկա:

Մնոց տարի մի, պզտիկ տղեն ըսոց. - Աղբրտանս պեյլու կարգվան. էլըմ, էրթըմ, խապար բերիմ, իզին կէնիս նե, - ըսոց հորը:

Իզին ըրոց. էան էալ գնոց. աղբրտոց ինչ օլտուղին իմաց էլավ, գընոց օր աղջկան խոսացընել տա:

Աղջկան պապը օր լսեց, վազեց գընոց, ըսոց. - Մի ըներ, մի էրթըր, քու գլոխդ էալ կը կըյրե, մեք էրկու աղբեար իք, մեր թագավորութինը կը վերջանա, մեր ումետը դու մնացիր:

- Թագավո՛ր ապրած կենա. էրկու աղբեարս գընցին, անկարելի է, ես էալ կէրթըմ աղբրտանցս էտև:

Տղան գնոց աղջկան մոտ, ինչ օր էրեց, չի կրցավ խոսեցնել տար, ժամանակը լեցավ. գլոխը տի կըյրե:

Թագավորը օր լսեց. շուտ-շուտ էլավ, բոբիկ վազեց, գնոց օր աղջիկը թուրը քաշեր՝ տին գլոխը բռներ՝ կճկըցուցեր է, տի շնլին կըյրե. թուրը բռնեց. - Մի՛ կըյրիր, ինձի պախշիշ էրե. էս մեկն է մնացեր... :

---

* Կարոտութին ունի, 40 տարի է չի տեսած աղբորը (ծ.ա.):

- Թող իմ թրի տկուն ընցնի:

Թրի տկուն ընցավ:

Տղան խալըսեց թագավորը. աղջիկ թուրը զարկեց տեղը:

Թագավորը ըսըց. - էլի գնա տուն, էրկու աղբորս թագավորութին ղու տի ինիս:

Տղան շատ ղուվաթով էր, թրի տկուն օր ընցավ, ղուվաթն էալ, տղամարդկութին էալ կըյրվավ. օր ըսիս՝ հավու մը պարա ղուվաթ չուներ:

Թագավորը ճանփա դրեց. էլավ ընկավ ճանփա, ինք զինքը ըսըց. «Ես էրթըմ տունը էալ, ի՞նչ ինիմ», միտքը փոխեց. «Կէրթըմ զաման մի ղուրպերութին»: Ալ տուն չգընըց. ընկավ ճանփա, շատ, քիչ գընըց. քաղաք մի հասավ, մութը վրա առավ, շատ մեծ քաղաք էր, հայավ որ գոմեշները կը պոռան. եզները կը պոռան. հավերը կը կանչեն, շները կոռնան, փսկընները կը մայվեն. տղան մտածեց թե էս ի՞նչ բան է, մտավ տուն մի, պառավ մի նստուկ էր օճխին քնարը:

- Բարև քեզ, մեա՛ր:

- Աստուծո բարին, որդի՛:

էլավ մինտեր մի տվեց ըդ տղին տակ, տղան ըսըց. - Մինտեր մալ կուտաք իմ թագուն, թազին սովրուկ է, առանց մինտերի չը նստիր, - ըսըց, - ձեր քաղաքը գոմշընին ինչո՞ւ կը պոռան, շըվնին ինչո՞ւ կոռնան... :

- Ա՜խ, այ որդի՛, ա՜խ, էաս քաղաքը իրեք միլիոն տուն է:

- էաս քաղքի մարդիկը ո՞ւր են օ մարդ չէ մնացեր, գնացած է: Ինչո՞ւ համար:

- Տիրանը գընցած է, քուլլի գոմեշը, շունը ... սոված է:

- Ո՞ւր է գընցած:

- Տասվերկու տղա ունիմ:

- է, մեար, ո՞ւր է գընցած:

- Աղջիկ չունիմ:

էաս անգամ բարս ձեան տվեց, իմացավ օր խուլ է:

- է, մեար, ո՞ւր է գընցած:

- Գընցած է ճամին քաղաքը. մեր թագավորը ճամին քաղաքը կը նստի. աղջիկ մի ունի, էնանկ աղկեկ է. էնանկ աղկեկ օ օր արևցաթինե, արևպատ նստինե, արևի պես կը ցեաթե աղկեկութինը, քաղքին մարդը վեվ օր գընընց, էադ աղջկան թամաշա ընընց, էալ չէկավ, հոնի մնընց: Թագավորը ճամեն մեկ սարայ շիներ է. պատերը առիքն էալ, դընռվընին էալ ճամ. էրթողը մընընց հոն, աղջկա թամաշա կինին, էաս քաղաքը դարդընկավ, ես էալ տ'էրթըմ, աչքը չունիմ. հարիր տարվա մարդ իմ:

Պառավին պզտիկ տղին հրեղեն ձի մի ուներ, ծովու միջուն էր:

- Այ որդի՛, եոթը սյուրու ունիմ ամեն տեսակե, էան մեկ դի՝ պզտիկ տղիս ձին մեկ դի է, ձինը գիշեր, ցորեկ տղիս համար կուլա, չամիչ կուտամ, չուտեր. գինի կուտամ, չի խմեր:

Տղան առավոտը կանուխ էլավ, մարդ չգտավ, հայավ օր պառավին խոսքը իրավ է, էկավ իրան ձին կապեց պառավի պզտիկ ձիուն տեղ, փոխեց, ձինը հեծավ, թազին էալ իրան առաջ՝ գընընց: Շատ գընընց, քիչ գընընց, Աստված գիտե. գընընց Մասիսու լեառան պես լեառան հետ կայնավ. հեռոեն մեկ սև անպ մի տեսավ. էաս անպը մենծընցավ, մեկ ազրև մի թափեց օր էրկինք, գետին ջուր-ծով կընրվավ. մեկ մենծ չինարի ծառ մի կար, մեջը պոշ էր, հինգ տեղ անկողին կը ցգվեր, ձինը քաշեց մեջը, ինքն էալ մտավ. արզևը կընրվավ, էլավ ընկավ ճանփա, գընընց մեկ պաղչայի մի ընռաստ էկավ օր ամեն բարիքը - խնձոր, թութ, ինչ ըսես, կար մեջը: էաս պաղչան դևի մի էր. մարդ չէր կրնընր էրթընր մոտը: էաս դևի հետ կար էրկու պզտիկ դև, էաս չուճուխնին մենծ դևին աղբրնին էր:

- Բարև քիզի, դև՛ աղբեար:

- Աստուծո բարին, աղբեար:

- Դև՛ աղբեար, ի՞նչ է էաս չուճուխնին հետ կռիվ կինիս:

- Պապերնիս մեռավ, էաս պախչան տի կիսիք մեք. էաս չուճուխնին իմ պզտիկ աղբեարն ին. հիմա տի կիսիմ մալս, քընի պզտիկ ին, էտև օ մենծընցան նե, ալ չեն ի տար ինձի մալ:

- Աստված քիզի միզի համար ճանփեր է, մեր մալը դու տի կիսիս:

- Դուք ինձի էթիաթ կինիք, ես կիսիմ:

Մալերը կիսեց, շնորհակալ էղան, ճանփա ցույց տվին:

Մենծ դևը ըսընց. - Դու հավու մի պար ղուվաթ չունիս, եփոր նեղը ընկար, ինձիս կանչե. «Ա՛յ դև աղբեար, քու ուժդ ինձ հասցընիս». էան վախտը ես կը հասնիմ:

Դևը հանեց նշան մի տվեց, որը միտքը բերե:

էադ եոթ գլխանի դևը բարև մնա ընընց. ետ դարձավ. դևի պզտի աղբեարները գընցին, աղբրի մի վրան նստան. թագավորի տղին ըսին. - Դու օ չընլլեիր նե, մեր աղբեարը չուճուխ տեյին տե միզի տի խափեր, մեք քու մինե շատ շնորհակալ իք:

Մե տղան հանեց մրչոմի թև տվեց. մեկալ տղան ալ աղվնկա փուր ձգեց ճեպը:

«Գնաք, մնաք բարի» էրին, բաժնվան, մեկ տղան ըսընց. - Թագավորի՛ տղա, կայնիր օ ճանփան ցույց տամ:

- էաս շատ բարսը լեառը տակը օր գընցիր, իրեք անգամ ծիդ ընդին, ընդին կը քշես օր տաքնա. ծիուդ զենկու կը զինիս օր էրկու զենկուն անցնի, վորուն մեջ իրուր դպի, մի՛ վախենար, քու ծինդ հրեղեն ծին է, չխոնջնար, տասվերկու սահաթ կը քաշե մինչև լեառան գլոխը. մենծ ածդահար մի կա էադ լեառան գլոխը. էաս քադքի մարդն օր դատարկվեր է. գընցին թագավորի աղջկան սեյիր ինիլ. էան տեղեն օր ճամին քադքի մարդիկը ետ դառան օր գան, էադ մարդիկ կերավ ածդահարը. էադ ճանվ՝ան գոցեր է, մարդ չգար, ծինդ քըշես. ածդահարը քեզ տեսնելուն կուգա, թուրդ կը քաշես, ծինդ եան կուտաս, մենծ աղբորս անունը կուտաս, անանկ կինիս օր մի թուր կը զինիս ածդահարի չըլլոցը. էվել չիս զիներ:

Բարև մնա էրին էդոք, դարձան. տղան ընկավ ճանփա, գընընց հասավ լեառան տակ, ծին տարավ, բերեց իրեք հեղ. զարկավ զենկուն, փորուն մեջ իրուր դպան զանկուստանը: Ածդահարը վերեն սուզուլմիշ էրավ, էկավ տղին, տղան էան տվեց. մի թուր զարկեց, թուրը թիզ մի հողը մտավ, տղան քշեց էլավ լեառան գլոխը, հայավ օր աղբիր մի կա, ծիուն վրա թիզ մի ճերմակ փրփուր է կայներ, թազին անոթի կուզուրտա, ծինը կը քորքըզնա. ծիուն առաջ չամիչ լցեց, թագուն առաջ եաղալի չորեկ ցգեց, ինքը չպողը լեցոց, պաշլայեց խմիլը, սեյիր ըրըց օր սահաթ մի չքաշեր քաղաքը այնայի պես կէրևա. հայավ դեպի քաղաքը. եոթ խաթ է էադ աղջկան նստած օդան, ճամով շինած, աղջիկ մի մեջը նստուկ է. ֆեների պես կը վառվըռի. աղջկան աղեկութինը էնքան շատ է օր երկրի մարդ սոված, ծարավ նստած՝ թոփված սեյիր կինին: Տղան սեապեց ծինը չայիրը. թագուն ըսըց. - Չիուս մուխաթ ըլլիս, մարդ, գող գա, ինձի խապար տաս, - ինքն էջավ, քաղաք գընընց օր սեյիր ինե:

Տեսավ օր թագավորի աղջիկը օդին մեջ էր, անքան աղկեկ է օր աշխրքին էրեսը չկա. հայավ դեպի աղջիկը, ֆեներ-ճրագ չկա, աղջկան աղկեկութինը օդի մեջ լոս է. ծեառքը նետեց ճեպը, աղվնկա փուրը հանեց, զարկեց աչքը, էղավ աղվնի մի, թռավ աղջկա դիները նստավ. տղան հոտի շատ ախվախ քաշեց. ծեառքը նետեց ճեպը, հանեց մրջումին թևը, քսեց էրեսն ու բերանը, էղավ պզտի մրջոմ մի. էաս օդի բոլորը օլրտավ-օլրտավ օր ներս մտնե. տեղ, ծակ մի չկրցավ գտներ. իրեք օր անոթի՝ ծարավ օլրտավ, թաքի ծակ մի գտավ շուշեին արայեն. անցավ օդան, գընընց աղջկան մազերուն մեջ մտավ:

էադ աղջկան պապը վեզիր մի ուներ, մեկ աչքը մեկելին չէր իտար, խազնեն վեզիրին ծեառքն էր. վեզիրին էալ տասնըհինգ տարվա տղա մի ուներ. էսոր, լալան ըսըց. - Վեզի՛ր, թագավորը քիզի շատ կը սիրե, իրան աղջիկը քու տղին ուզե, բան չըսեր, կուտա:

Թագավորին մինե ուզեց, տվեց:

Աղջկան քառսուն խալայեխ կար, քառսուն էալ դուռ կար, ամենկը դուռ մի կը պեյեին, մենծերնուն անունը Աննա էր, խորագետ-ախըլտար էր, թագավորը կը դարձներ, խելք կը սորվեցներ, էնոր խոսքը կանցնիր. էաս աղջիկնուն վրան էալ մենծ էր:

Աննա ուներ 12 տարեկան տղա մի, թագավորը էդոր էալ մենծուքին տվեց. ինչ օր սարային պիտու է, էան տի բերե, իրան էալ՝ իր աղջկան էալ:

Թագավորի սարայեն դուս՝ լեառի լեանջ մեշե մի կա. թագավորը հարցնիք նե, հարիր տասնըհինգ տարուա է, տասնըհինգ տարվա էր, նստավ թախտը, օր թախտը նստավ իրեք ավուր էտև գընըց ավը, մի ճերան ըռաստ էկավ էադ մեշի մեջ, էադ ճերանին մարախլու էղավ, օրը իրեք հազար մարդ չէր կրնըր սաղ բռներ, էադ ճերանի համար ծերացավ, հարիր տարի անցավ:

- Վեզի՛ր, վեվ օր էադ ճերանը բռնե, թագավորուքինս կուտամ:

Վեզիրը շատ կըյրիճ մարդիկ թոփեց, գընցին, չկրցան բռներ էին:

Գանք տղին: Գիշերը աղջիկը պարկավ, չուք մի օսկի շամատան գլխու վերդին կը վառեր. չուք մի արգըքե շամատան ոտքերու տակ կը վառի: Օդային դուռը շուշե էր, Աննա խալայեղ կը պեյեր էս օդան, օր մարդ չմտնա ներս: Աթոռին վրա Աննա խալայեղին քունը տարավ, աղջիկը պարկեր էր ղուշքույի տեղին մեջը. շամատանները կը վառի. աղջիկն էալ մտավ խորունկ քունը. տղան մրջոմի շապիկը իրան վրուն հանեց. էղավ մարդ կինե, տեսավ օր աղջիկը քնուկ է. ընքվընին թուխ է, էրեսը կարմիր խնձոր է. միտքը փոխեց. աղջկան մեկ էրեսը խածեց, արդընին իրուր հասավ, էարին էլավ, վազեց տղի բերնի մեջ, շեքերի պես կերավ:

Աղջիկը պոռաց. Աննան արթընցավ:

- Աննա՛:

- Ի՞նչ է, թագավորի՛ աղջիկ:

Տղան թևերը փոխեց, գընընց մտավ բարձին տակ:

- Աննա՛, մարդ ես անցուցեր ներս, էրեսս մարդ խածեց:

Աննան դուռը բացեց, մտավ ներս, թագավորին աղջիկը սալխցոց էրեսը, որ արինը կը վազե, արդընուն տեղը պեյլու կինե:

Աննան մեշի խավ հանեց, զարկեց վրան, էարինը կըյրավ:

- Աննա՛, դու էաս տեղ մարդ իս բերեր:

- Այ ճանըմ, մարդ չէ էկեր, քառսուն դուռն էալ կը պեյիք:

- Գողը օդան է, դուրս չէ էլեր, դուռը կղպե:

Դուռը կղպեցին, պաշլայեցին ըսդին՝ ընդին հայիլը, սնտուկնուն մեջ հայիլը, չկրցան գտեր էին. լոսացավ, զարմանք մնացին, թե էաս ի՞նչ է:

Աննան ինք իր մտոքը. «Օձը պորտովը, ճնճուղը թևովը իմ ահուս չկրնը գար»:

Լուսացավ, աղջիկը ըսը. - Կերակուր տես, անոթի իմ:

Նստան օր տի ուտեն. Աննան ինք իր ձեռքով կը կերցներ:

Տղան քոլոզ զարկեց գլոխը, նստավ աղջկան քովը. մարդու չէր երևար: Աննան օր գդալը կը զիներ օր տաներ աղջկա բերան, տղան բերանը կը բանար, ինք կուտեր: Թագավորին աղջիկն ըսը. - Աննա՛, կերակուրը թմավ, փորս բան չգնը:

- Թագավորի՛ աղջիկ, 24 սահաթ է ինձիս մատներուդ վրա կը խաղցնես. զարմանք կը մնամ քու բանը ...:

- Աննա՛, ի՞նչ կինիս, անոթի մեռա ես:

- Թագավորի՛ աղջիկ, խենդեցեր ես դու, կերակուրը կուտես դու, ես չիմ ուտեր, էալ ինչո՞ւ կըսես, թե անոթի իմ:

Թագավորի աղջիկը հերսոտավ, քեն ըրը. էլավ դենը նստավ, տղան փորը կշտացոց, ըսը. - Փա՜ռք քեզ Աստված, փորս կըշտացուցի էսօր, թազիս ու ձիս ո՞ւր մնը:

Աննան ու աղջիկը զարմանք մնացին թե՝ էաս ինչ ձեան է կուգա մեր քովուն, մարդ չկա:

Աննայի տղան շուտ-շուտ ներս մտավ, հերսոտավ մորը վրա:

- Ի՞նչ կը խենդընաս թագավորի աղջկան վրա, դրսի մարդիկնին, կը զրուցին, շուշի միջուն քիզի անանկ մոտ կէրևա:

Աննան ձեանը կըյրեց. թագավորի տղուն գլոխը կեռար, քոլոզը վեար առավ, քերեց. ուշը վրան չէր, միտքը թազին ու ձին էր ինք զաննը ըրը թե լեառան գլոխն է. օր գլոխն վեար առավ, աղջկան էրևաց: Աղջիկը հերսոտավ Աննայի վրա:

- Իշտե մարդը, տի իմա կըսեիր, թե չիմ բերեր:

Տղան ավտորցավ, քոլոզը զարկեց գլոխը, չերևաց:

- Աննա՛, հիմա ես իմ մեղավո՞ր, թե դու իս մեղավոր, տեսա՞ր:

- Տեսա:

Աննա գնը 39 -ին կանչեց, էկան, ձեռքը կապեցին աղջկան դեմ կայնան:

Աննան ըսը. - Դըռվընին կը գոցեք, բանլիստանը կուտաք թագավորին աղջկան. հերքեշ իրան տեղը դըռվընին կը պեյիք, ես տ'էրթամ քաղաքը պախրճու քով, թե էաս ի՞նչ զարմանք բան է:

էլավ գընընց պախրծու քով, մի դերվիշ գտավ, առավ էկավ, դռվընին բացին, մտան օդան, դերվիշին ըսընց. - Հոս կեցի՛ր, փերտե մի քաշիմ, ընի էան դին, դու էաս դին կենաս օր հայիս:

Սանտալիան դրին դերվիշին տակ, նստավ, ըսընց. - Թաս մի ջուր լեցոցեք, բերեք:

Դերվիշը հանեց ծոցուն թուղթ մի, պաշլայեց կարդալը:

- Աննա՛, կընճկի՛ր, հայիր էաս թասին վրա:

Պաշլայեց հայիլը:

Ըսընց. - Բան կը տեսնե՞ս:

- Բան այիրտ չիմ կրնընր ինիր:

- Ըպա էադ ի՞նչ մրջոմ է, ջրին էրեսը կը լողա:

Հայավ օր իրավ՝ մրջոմը կը լողա:

- Դերվիշ, էաս ի՞նչ մրջոմ է:

- Ձեր տունը քանդողը էադ է: էադ մրջոմ չէ, թագավորի տղա է:

- Աննա, դերվիշին պախշիշը տուր, - ըսընց աղջիկը:

Ճանփու դրին, նստան կերակուրի:

- Աննա՛, ես իմ ձեռոքը կուտիմ օր իմ փորը էրթա, դու ինձիս կը խափիս:

Կերան, պրծան, սինին վերուցին: Իրիկուն էղավ, պարկեցան մինչև կես գիշերուն: Տղան տեսավ օր աղջիկը քնացեր է, անկողինը վրուն դեն է գընցեր: Տղան տեսավ, միտքը շփոթվավ, ընկավ աղջկա կրծոցը վրա, էրկու էրեսն էալ պագեց. աղջիկը շատ խորունկ քուն էր, վեր թռավ, տղան էլավ հեռընցավ վախուն: Աննան տեսավ օր աղջկան էրեսը պագեց:

- Աննա՛, ինձիս շերպեթ մի էրե, գնա, դուռը լավ պեյե:

Թագավորի աղջիկը ընկողինը առավ իրան վրա, պարկավ, մտոքը անցոց թե՝ չըպտի քնանամ, իշալլա տի բռնիմ էադ տղան:

Անկողինը բաց ըրընց. էրեսին վրուն դեն տարավ, աչքը բաց թողուց, շատ մընընց, քիչ մընընց. աղջիկը տյուշյունմեյի մեջ մնընց. տեսավ օր տղան քիչ-քիչ մոտեցավ: Տղան չպոխը լեցոց, չախմախը զարկեց, կրակը դրընց չպխին վրան, պաշլայեց խմիլը օդին մեջ ֆորթա զինիլը, կէրթա ու կուգա:

Աննան տեսավ, որ թագավորի տղա էր, դերվիշի ըսածն է, աղկեկ է շատ: Աննան ինք իր մտոքը ըսընց. «էս թագավորի աղջկան տեղը ըլլիմ նե, ըս թագավորի տղուն կառնիմ»: Տղան մոտեցավ աղջկան, ըսընց՝ աղջիկը քնուկ է, հըմը աղջիկը արթուն է, ընկողնի պոչը դեն տարավ, էրեսին վրուն, բռնեց աղջկան էրեսը պագեց. աղջիկը ընկողնու տկեն ձեառքը

էրկնցոց, բռնեց: Էլավ նստավ, ըսըց տղին. - Դու իրեք օր է կխացնես ինձիս, էշքեարե չես էլլը:

- Էշքեարե էլլալը խոլայ չէ. քու պապը զոռ թագավոր է:

Աղջիկը տեսավ օր տղան սիրուն է քանզ իզինք:

Նշան տվին, առին տղան ու աղջիկ, մեկ տեղ պարկան:

Տղան մտածեց. «Կինե մրջոմի շապիկը հագնիմ, բան է, պելքի քնացա»:

Մի սահաթ անցավ, աղջիկը կանչեց. - Աննա, էկու նստի օր բան տի ըսիմ քիզի:

- Ի՞նչ տի ըսիս, ըսե:

- Աննա՛, դերվիշ պապային խոսքը էլավ, գիշերը էրծվա օր թագավորի մի տղա էկավ, էրեսս պագեց, իմ մանիս առավ, իրանը տվեց ինձի, իրուր նշան տվաք, չիս հավատար, հայի՛ր:

Հայավ-տեսավ օր թարիխը դրմուն էր:

- Շատ ուրախացա ըս էրածը, արթըցա օր նշանը կա, տղան չկա:

- Խեր ըլլի, թագավորի՛ աղջիկ:

- Իշալլա խեր է:

Աննան գընըց: Տղան ու աղջիկը պաշլայեցին զրուցիլը: Աղջիկը ըսըց, թե. - Իրեք օր է իմ նշան դրած է. զիս վեզիրի տղին տված է. ըպա ի՞նչ տի ըլլի, դուն էալ նշան դրիր. ի՞նչ դուր տի ըլլի մեր հալը:

- Թագավորի՛ աղջիկ, քեզ կը փախցընիմ:

- Ես իմ պապուն անունը չիմ կոյրիր:

- Հպա՞ ինդուր տի ըլլի:

- Դու կանաս ճերան մի բռնե, տար պապուս, օր ինձիս էալ, թագավորութին էալ քիզի տա, վեզիրը հազար կըյրիճ տղա թոփեր է որ ճերանը բռնի:

Տղեն «մնըս բարով» ըսըց, գնըց օր թազին, ձին բերե: Բերեց, էկավ վեզիրին դուռը կայնավ, հաց փորի էղավ խզմեթքեար:

Վեզիրը թագավորին խապար տվեց թե պատրաստ իմ, էրթաք ավ: Գընցին մորին մտան. ճերկուն թապուր-թապուր շարվան, մեշենին ծեծեն օր ճերանը դուրս գա: Թագավորը ու վեզիրը էլան բանսր լեառան մի գլոխ, օր սեյիր ինին: Տղան էալ թազին առավ, ասկերին միջուն զատվավ, էլավ պզտի լեառան գլոխը կայնավ: Ճերանը էլավ, ձիով խառվան իրուր, կը կանչեն. հա պապամ, հա պապամ. վո՛ւրուն, թո՛ւթուն:

Ճերանը դուրս էլավ, շիտակ դեպի տղան կէրթա, օր մոտեցավ, թազին սեապեց. «Մրճա՛ն, քիզի տեսնեմ, ինձի չամչցնես թագավորին քով»:

Մեշի միջուն էլավ ընկավ դեօր տեղ, օր օվա է քանի աչքդ կըյրե. տղի աչիցը կորավ, տղան մեշի միջուն էլավ, տեսավ օր թազին մոտեցեր է, հըմա քիչ մընոց օր բռնե. ինք ձինը քշեց, թազին ու ճերանը չութ կէրթըն. թագավոր ու վեզիրը սեյիր կինին. հա՛ հիմա կը բռնե, հա՛ հիմա կը բռնե...: Ճերանին ինքեանը կոյրավ, օլրվավ դեպի մեշեն, տղան ըսըց. «Այ գիտի դև աղբեար. ո՞ւր մնացիր». ղուվաթը էկավ տղին վրա, կճկավ, ճերանը սաղ-սաղ բռնեց. վեզիրը թագավորին ըսըց. - Տե՛սար, թագավո՛ր ապրած կենա, իմ բռնած խզմեթքեարս բռնեց:

Վեզիրը գընըց. - Տո՛ւր ինձի, - ըսըց:

Թագավորի տղա է: Եոլը եոլաղը գիտե:

- Ինչո՞ւ տի տամ, ես իմ բռներ:

- Դու իմ խզմեթքեարը չի՞ս, փարովս բռներ եմ քիզի:

- Ինձի մի ժում հաց չես տվեր, ես իմ հացովս ու ջրովս իմ էկեր:

Էլան էկան սարայը, տարավ ճերանը դրեց թագավորի առաջ:

Աննան օսկիե խաֆես մի պատրաստ տեսավ. ճերանը դրին մեջը:

- Որդի՛, մուրազդ ուզե օր տամ, - ըսըց թագավորը:

- Թագավո՛ր ապրած կենա, իմ մուրազը քու աղջիկն է:

Վեզիրը հոտի տի պաշլայե լացը:

- Աղջիկս օր տվի, թագավորութինս էլ կուտամ, - կըսե տղին, - հայտե՛, քուկդ է:

Վեզիրը քեն ըրըց. լալեն էլավ գընըց ինք իր տունը:

Աննան աղջկան մուժտե տարավ, թե՝ «Քիզի տվեր է պապդ էան թագավորի տղին»: Դարձավ էկավ օր տահա թագավորն ու տղան լախրտու կինին:

- Աննա՛, տղան առ գնա աղջկան քով օր տեսնա:

Տղան գընըց, աղջկան քով մընըց:

Վեզիրը գիշերը թաք լոս մտածեց. «Ես ինչ տիպարա ինիմ, օր տղան կորսնցընիմ»: Էլավ սուտ ու փուտ գրեց ուրիշ թագավորի ըս թագավորի բերնեն, օր իրուր զինին. շատ քոթի խոսքեր էր գրեր: Էան թագավորը պաշլայեց ասկերը ժողվիլը ու էկեր է սինոռի բերանը: Հիմա վեզիրը էան թագավորի բերնեն իրան թագավորին գրեց, թե. «Էկեր իմ սինոռդ, կռիվ կուզիմ, եա էրկիրդ կուտաս, եա կռիվ կենիմ»: Վեզիրը ընու, ըսու խառնեց իրար:

Էաս թագավորը պատրաստ տեսավ, գընըց դեմը:

Վեզիրը տահա շատ տի խառնե. ինքն էալ, տղան էալ՝ տունն է, մտածեց օր տղան քառսուն ձիավորով տանե, կորսնցընե: Առավոտը էլավ, էկավ թագավորի մոտ:

- Թագավո՛ր ապրած կենա, մի կըյրիճ տղա՝ էն էալ տունը թողեր ես, քառսուն ղոչախ կըյրիճ տղա ունիմ, մե մ'էլ էաս տղան թող էրթա օր Տեմուր-ղափուն պեյեն:

Հրաման առավ:

Աննան ըսըց տղին. - Վեզիրը տիպարի կօլրտի, եբ էրթըս՝ վեզիրի տղան էալ հետդ տար. իմ տղան էալ հետդ կը դնիմ օր քիզի խզմեթ ինե. մեմ'էլ վեզիրի տղի հացը չուտիս: էլան Տեմուր-ղափուն էջան, տեղավորան:

Վեզիրը կինե թուղթ գրեց էան թագավորի քի՝ Տեմուր-ղափուն պոլ է, էկուր առ:

Մեկալ թագավորներ էլան, քշեցին Տեմուր-ղափուն, օր առնին, քառսուն էրկու մարդու հետ կռվին: էադ գիշեր լոպեթը թագավորի տղին է, օր պեյե Տեմուր-ղափուն: Տղան էլավ Տեմուր-ղափուն կղպեց, նստավ պիճեք տաշուն վրա, չուպուխը պաշլայեց քաշիլը: Շատ մընըց, քիչ մընըց, քունը տարավ, թազին քովը նստուկ էր. ասկըրին ձիաննուն զանկուստաննուն ձեան օր էլավ, թազին հաչելեն գընըց վրանին. տղան արթըցավ, դուռը բացեց, ձինը հեծավ, տղոց էալ չկրցավ խապար տար. էլավ դուրս, հրեղեն ձիուն մի զենկու զարկեց, մտավ միջվանը, խառվան իրուր, պաշլայեցին իրար ջարդիլը. առավոտուն տղան հայավ օր մեռելին արինը սաղ մարդը կառնե, կէրթա:

Վեզիրի տղան իրան պապուն թուղթ գրեց. «Ղասաֆեթ մինիր, ես սաղ իմ, շատ մարդ էալ ջարդեցաք»: Վեզիրը մտածեց, հայավ, ըսըց թագավորին. - էդոնք շատ կըյրիճ թոռուն ին, մեղք ին. էաս տըղուն հազար մարդ ճանփիք, էրթա Տեմուր-ղափուն պեյե, էնդոնք գան:

Հազար մարդ գընցին, հասան հոն, էնոնք էլան էկան, էրկու սահաթ մընըց օր քաղաք հասնին, էնտեղ հավուզ կա, էջան օր վլացվին:

Ըսըց. - Ես տի մտնեմ հավուզը վրայիս արինը վլալու, դուք հալավներուս արինը վլացեք:

- էաս տեղ վեվ օր մտեր է, չէ էլեր, մի մտներ:

- Ես լող գիտեմ, ինչո՞ւ տի խեղդվիմ: Մտիկ չէրեց, մտավ ջուրը, տալմիշ էղավ հավուզը:

էադ հավուզը ծովու հասպ էր, չորս հատ ջրի աղջիկ կար, վեվ օր սիրուն ըլլար նա, կը բռնեին:

Բռնեցին էաս տղին, տարին խորունկը:

Հայան օր էալ չէլավ. Աննայի տղան վազեց մորը ըսըց ...:

- Վա՜յ վա՜յ, ինչո՞ւ թողիր:

Մտիկ չէրավ:

Վեզիրի տղան թագավորի տղի շորերը հագավ, շատ ուրախացավ օր թագավորի աղջիկը առնե, փառք քեզ Աստված, օր կինե իմ խսմեթն է:

Վեզիրն է, հին մարդ է, շատ ուրախացավ, ձիովնուն թենպե ըրըց. «Հեչ տղին անունը մի տաք թե խեղդված է. ես իմ տղին կը հագցընեմ ընոր հալավները»:

Աննան տղին ըսըց. - Որդի՛, ծեան մի՛ հանիր, տեսնըք ուր կը կայնի:

Էկան, թախըմով վեզիրին հետ գընցին թագավորի սարայը. վեզիրի տղան թագավորի տղի հալավները հագեր էր. թագավորը չէր ճանչնար, թե վեզիրի տղան էր, աչքերը չէին տեսներ:

Իրիկուն կըլլի, թագավորը կը հարցու. - Որդի՛, ի՞նչ ըրիք, ինչպես կռիվ էրիք:

- Թագավո՛ր ապրած կենա. գիշերը վրա տվին, զարկաք, զարկվաք, ջարդեցաք:

- Աննա՛, տղան մեղք է, գնա՛, պատրաստ տես օր գա աղջկա քով, - ըսըց թագավորը:

Վեզիրը շատ ուրախացավ օր իր տղան տ'էրթա աղջկան քով. ըսըց. - Որդի՛, գնա, կես սահաթ տես ու էկու:

Վեզիրի տղան գնըց աղջկան քով, չորս դուռ անցավ, բըռնեցին. - Հալավներդ հանե, օր աղջկան քով էրթըս:

Հալավները հանեցին, մայրեցին, վեզիրի առաջ նետեցին:

Վեզիրի խելքը ընցավ, շատ մընըց, քիչ մընըց, էլավ ֆեները փակոց, գընըց թագավորին քով. - Քու աղջիկդ հերսոտավ, փեսադ մայրեր է, չի՞ս հավատար, իշտե լեշը:

Թագավորը էն տղի համար խելթփավ, ջուրը լցին վրան, խելքը գլուխը էկավ, հերսոտավ:

- Իրանք ինչ դուր էրած է. ես էալ էան դուր տ'էնիմ 40 խալայեղին էալ:

Վեզիրը լալը թողեց, գընըց տունը:

Թագավորը կանչեց Աննային. - Դուք ի՞նչ դուր ըրեր իք, ես էալ էնդուր տ'էնիմ:

- Թագավո՛ր ապրած կենա, էան վեզիրին տղան էր:

- Ո՞ւր է մեր տղան:

- Ջուրը ընկած է, էկած չէ:

- Ընանկ է, լավ իս էրեր, տղան օր ջրեն հանեցիր՝ լավ, օր չհանեցիր, սուտ էղավ, գլոխնիդ կը կըյրիմ:

- Քու քով իրեք օսկի թոփ կա, տուր, էրթըմ հանիմ:

Օր օսկի թոփերը ուզեց. շատ դեմ առավ, հերսոտավ:

Օսկի թոփը առավ էկավ. թագավորի աղջիկն էալ հետը, 40 խալայեղն էալ առին, գըցին հավուզին վրա:

Թագավորին աղջիկը ճըզ քաշեց, հանեց ծոցուն գիրքը օր Սողոմոն իմաստունին իսկի գրած գիրքն էր, իսկի ծեռաց գիրքն էր, օր անցեր էր էդոր ձեառքը:

Աննան հրաման ըրըց՝ հավուզին չորս դին շարվեցեք:

Թագավորի աղջիկը պաշլայեց Սողոմունու գիրքը կարդալը. կարդաց-կարդաց կես ըրըց. - Աննա՛, մի օսկի թոփը նետե ջրի օրթալախ տեղը, օր տղան սեապեն ջրի աղջիկները:

Մի օսկի թոփը նետեցին թա ջրի օրթալախ տեղը. տղան ջրի միջուն քիչ-քիչ բանձըրցուցին: Թագավորին աղջիկը կարդաց, ունքը վերոց, մի օսկի թոփն էալ ցգեցին. էաս անգամ ավելի բանցրուցին տղան, հա օր գլուխը կէրևա քիչ մը. քսան չորս տուն մընոց կարդալու:

Քսանը չորս տունը օր թմավ, աղջիկը ինք իր ձեռոք նետեց օսկի թոփը, տղան էլավ էրեսը, բռնեցին հանեցին չորը, լաթերը հետվանը տարած էին, հագավ: Թագավորի աղջիկը հայավ օր տասվերկու տեղ էրեսը կծած է, արղնուն տեղն է, պեյլու կինե. խընդաց ըսըց. - էադ ի՞նչ է թագավորի՛ տղա:

- Թերեսի աղջընները անքան ինձիս չարչարեցին, էրեսս խածին օր:

- Դու ինձիս ինդուր չարչարեցիր նե, առջիդ էկավ:

Թագավորին խապար տվին թե տղուն հանեցին:

Տղան գընոց, գլխուն գալածը նաղլ ըրըց. թագավորը հրաման ըրըց. վեզիրի գլոխը կըյրեցին:

Իրեք օր մընոց. Աննան իզին առավ օր տղան կարգեն:

Թագավորը իզին տվեց օր տավուլպազները զառնվի. մըզիկանին փչվավ. սազ սեոհպեթ. հարսնիքը բռնեցին:

Էրկու ամիս, իրեք ամիս իրուր քով պարկան, էլան, ինչպես քորաղբոր, տղա մարդկութինե կըյրվեր էր վախտին, օր իրան ամուի աղջկան թուրի տկուն անցած էր: Գիշեր-ցորեկ թագավորի աղջիկը կը մտածեր. «Ես քիզի առի օր մուրազս առնիմ, դու էալ ինձի պես իս, գլխուդ գալածը նախլ էրե, ես տերտիդ դերման ինիմ»:

- Իմ անունս Զենճիլ կըյրող է, ես իրեք տարվա ճանփա ամուի աղջիկ մի ունիմ, թագավորութին կինե. գընցի օր ինձիս առնե, չառավ, թրի տկուն անցոց, ղուվաթս էալ, տղամարդկութինս էալ գնընց:

Թագավորի աղջիկը կանչեց Աննային, տվեց տասվերկու հարիրնոց օսկի, ըսընց. - Կառնես խումրի մի, դերվիշի լաթեր, կեյընկա փոսդ մի, կուգաս:

Աննան հազր էրեց: Աղջիկը դերվիշի լաթերը հագավ, փոստը վրան առավ, խումրին էալ դրեց ծոցը, քոլոզն էալ գլոխը:

- Աննա՛, զտղան ընանկ մուղայեթ կըլլիս, օր մինչև ես էրթըմ, գամ:

Աընընք բարի ըսընց. ճանփա ընկավ, գնընց: Գնընց-գնընց, ըն թագավորի քաղաք գտավ, գնընց թագավորի սարայը մտավ:

- Բարև քեզ, թագավո՛ր ապրած:

- Աստուծո բարին, դերվի՛շ պապա, նստիր, - ըսընց:

- էկեր իմ օր աղջիկդ ինձի տաս:

- Աղջիկս քիզի կուտամ, էկեր կրցար իրեք հետ խոսացուցիր, օր չխոսացնել տվիր, գլոխդ կը կըյրե:

- Ետ պտի զրուցնել տամ, ետ հոգուս ըլլիմ:

Դերվիշը գընընց. - Բարև քեզ, թագավորի՛ աղջիկ:

Աղջիկը ծեան չտվեց, դերվիշ խումրին ծոցուն հանեց, սեապեց օր գընընց շամատանի տակ մտավ: Խումրին շամատանի տակ մտավ, տկուն ծեան տվեց:

- Աստուծո բարին, պապա՛, թագավորի աղջիկը չխոսիր, դերվիշ պապա. հինգ վեց տարի է գընցեր ու չիս էկեր. թագավորի աղջիկն էալ գլոխ չմնընց, կըյրեց. դերվիշ պապա, մի քարոզ ասա, մտիկ ինիք օր պելքի թագավորի աղջիկ դարձի գա ...:

- «Կըլլի, կըլլի վախտին մեկ պարտկնտեր, պարտկը չկրնընր տար, պարտկնտիրանը կը բռնեն էաս մարդը օր իրանց փարային տեղը մորթեն, կէլլա գիշերը կը փախի. շատ կէրթա քիչ կէրթա էտև կը հայի օր մե մի էտևանց կը վազե. ըս մարդը կըսա-ջըհա պարտկնտերն է. իզինք տի բռնե: Վախուն ծնկվնին կը կոյրի, կը նստի:

- Աղբեար, դու ի՞նչ մարդ իս:

- Ի՞նչ մարդ իմ, պարտք ունիմ, պարտակնտիրանուն կը փախչիմ:

էլան էղան ընկեր, ընկան ճանփա, շատ գընցին, քիչ գընցին, դարձան էտևնին հայան օր մե մի էտևնին կը վազե:

- Աղբեա՛ր, էդի եա իմ պարտկնտերն է, եա քու (լա՛վ քարոզ է. շատ լավ կը խոսիս, կըսե խումրին, դերվիշ պապա, խոսա՛, պելքի գութ ընի

թագավորի աղջկա սիրտը) մեք էդոր ափուցը չիք կրնար խալըսիր. ճանփուն վերդին դո՛ւ կայնիր, վարդին՝ ես, քումը նե գինիք, իմն՝ կինե գինիք պանիք:

էկավ ընցավ ըն մարդ:

- Աղբեա՛ր, կայնիր խոսուքին էնիք:

- Ի՞նչ կայնիմ, պարտկնտիրաննուն ափուցը կը փախնիմ:

Էղան իրեք ընկեր գընցին, շատ ու քիչ գընցին, մե մեշի մի մեջ մքնեց: Մեկը նաճար էր, սղոց մի, ուրագ մի ուներ գոտին. մեկն էլ թերզի էր, մըյրատ մի զարկեր էր գոտին. մեյն էլ կարդացող էր: Նաճարը ըսըց. - Դուք պարկեցեք, ես մուխայեթ ըլլիմ օր պարտկնտիրանը չգան. նաճարը հայավ օր քունը կուգա, էլավ սղոցով կըյրեց փետը, ուրագով տաշեց, մարդ մի շինեց: Թերզիին մխտեց, հանեց վեր, ինքը պարկավ: Թերզին հայավ օր մի մարդ կէրևա, շատ վախեցավ թե մեր պարտկնտիրանն է. կըճկելեն գընըց դեպի էդ փետե մարդը, փետով մխտեց, ընկավ, հայավ՝ օհ, փետե մարդ է, մեր նաճարն է շիներ օր քունը չի տանի: Թերզին բերեց իրան վրուն չուխան ձևեց, կարեց, հագոց էադ փետե մարդուն, ֆեսին տկուն գտակն էալ դրեց գլոխը, էկավ ըն կարդացողը մխտեց:

- Էլի դուն պեյե պայ մ'էլ, ես քնանամ:

Կարդացողը էլավ, տեսավ օր մարդ մի պարկուկ է. հայավ օր փետե մարդ է. լաթեր է հագոցած՝ հանեց ծոցուն գիրք մի. պաշլայեց կարդալը. փետե մարդը սաղցավ:

Դերվիշը էաս պատմեց ու ձեան տվեց խումրիին:

- Շամատա՛ն աղբեար, էաս իրեքին վեր միին քովն է մարաֆեթը, որ էաս փետե մարդը սաղցոցին:

- Դերվի՛շ պապա, մարաֆեթը կարդացողին է:

- Չէ՛, մարաֆեթը թերզուն է:

- Չէ՛, դու չիս գիտեր:

- Չէ՛, դու չիս գիտեր:

Մենծ կռիվ մի կինին դերվիշը ու շամատանը:

Աղջիկը կը խոսի. - Ի՞նչ կռիվ կինիք. կեցեք օր ձեր դատը ես կըյրիմ: Մարաֆեթը նաճրուն է օր փետե մարդը շինեց:

Աղջիկը օր խոսեցավ, դերվիշ պապան. - Պատրաստ կեցիր, մեկ էոճդ հանեցի:

Խումրին մտավ դերվիշի տորպակը:

Մեկեալ իրիկունը կինե գընըց աղջկանը օդան. խումրին սեպեց, գընըց մտավ սնտուկի մեջ:

- Բարև քիզի, թագավորի՛ աղջիկ:

Աղջիկը պատասխան չտար:

- Բարև քիզի, սնտո՛ւկ աղբեար:

- Աստուծո բարին, ղու բարով էկար, դերվիշ պապա ... ելն ... թագավորի աղջիկ «Աստուծո բարին» չառներ. քարոզ մի տուր, որ մտիկ ինիք:

- Կըլլի կըլլի, սանդուխ աղբեար, պապմ ու տղա մի, լավ մտիկ ըե, սանդո՛ւխ աղբեար, էաս քարոզս լավ է:

- էաս տըղեն կէլլա ղարիպութին կէրթա. իրեք վարպետ մեկ տեղ կը բանին. իրեքի չրաղ մի կըլլի օր բան սորվի էդոցմե մի ամիս կը մնա. էսոր հեարը շատ դժար կը հիվընդնա, թուղթ կը ճանփե էաս տղին. վարպետը կառնե, կը կարդա. «Գիրս իրիկունը հասավ՝ իրիկունը, առտուն հասավ՝ առտուն գաս, ես հիվանդ՛ կը մեռնիմ»: Վարպետնին մեկը սաճին ոտքը շինեց, օրթանճա վարպետը՝ սաճը. պզտի վարպետը թևը շինեց, տղան նստըցուցին մեջը. պզտիկ վարպետը օդը տվեց տղին, տղան թռուցին, գընըց իրան պապուն ժմնավ, հողը գերեզման ըրըց:

- Լսեցի՞ր, սանդո՛ւխ աղբեար, մարաֆեթը ո՞ւմն է, սաճի ոտքը շինողի՞ն է:

- Չէ՛, սաճը շինողինն է:

- Չէ՛, ես քու էն՝ էն, էն պապու կողը ... ոտքը շինողինն է:

- Չէ՛, չէ՛, հա, սաճը ...:

Սաստիկ՛կռիվ մի կը հանեն:

Աղջիկը կըսե. - Ինչո՞ւ կռիվ կինիք. կեցիք ես ձեր դատը կըյրիմ: Մարիֆեթը պզտիկ վարպետինն է օր թևը շինեց, օդը տվեց, պապուն հասոց:

Խումրին էկավ մտավ տորպակը: Դերվիշը ըսըց. - Թագավորի՛ աղջիկ, մընըց մեկ էոճդ. պատրաստ կեցիր օր քեզ տ'առնիմ:

Մեկալ իրիկունը կինե էկավ: Բարև ելն. խումրին մտավ դռան ծակը:

- Բարև, խումրի՛... :

- Աստուծո բարին... :

- Դուռ աղբեար, քարոզ մի տամ, կըլլի վախտին էարիկ մի կնիկ մի, էրկու աղջիկ, մի տղա, էրկիր անոթութին կըյնի. - Կընի՛կ, ես էրթըմ ղարիպութին բանիմ, փարա բերիմ, ցորեն առնիմ:

Գնըց, սով ընկավ սաստիկ, էաս կընիկը պաշլայեց ժողվորդ ինիլը. չուճուխնին փրցոց անոթութան: էարիկը էկավ տկլոզ, փարա չունի ձեառքը: էարիկ կնիկ կռիվ էրին, կնիկը ըսըց. - Տե, դու բան չունիս, չուճուխնին իմն ին, անոթութան տարին ես իմ պեյեր, դու փախար, գընցիր:

- Այ կնի՛կ, աղջիկները քիզի, տղան ինձի, իմն է:

- Չիմ իտար, մա՛րդ:

- Դուռ աղբեար, լսեցիր, տղան ո՞ւմ կըյնի:

- Մե աղջիկը մորը, մե աղջիկն ու տղան հորը:

Կինե կռիվ կինին, աղջիկը կըսե. - Տղան պապուն, էրկու աղջիկն էալ մորը կըյնի:

- Ընանկ է նե, թագավորի՛ աղջիկ, դու էալ ինձի կըյնիս:

Թագավորին խապար տարին օր դերվիշը աղջկան խոսեցընել տվեց: Պատրաստ տեսան օր տի առնե, էրթա:

Դերվիշը էաս աղջիկը հեծոց ձինը, թուրը վրան էր. տի քակեր, չթողեց, դերվիշը ձիուն կեմը բռնեց. ընկան ճանփան, շատ գընցին, քիչ գընցին, իրանց քաղաքը հասան, մտան դռնեն ներս, գընընց տեսավ օր՝ էաս իմ ամուիս տղան է, պենզը տվեց, պենզ առավ: Դերվիշ պապան ըսըց. - Թուրդ քաշե, տղան օր ինչ դուր թրիդ տկուն անցուցեր իս. կինե էնդուր իրեք անգան տանցնես ետ:

Տղան իրեք անգամ անցոց թրի տկուն: Տղան թուրը առավ, կապեց մեջքը: Դերվիշը նստավ ըսըց. - Տե, ես քեզ խալսեցի էաս քու ըսած ամուիդ աղջիկն է, կուզիս՝ տուն ճանփե, կուզիս՝ գլոխը զարկ, էալ չիմ խառնվիր:

Թագավորի տղան հազար ղուրուշ տվեց Աննային, գընընց խենդ ջորի մի բերեց. էաս աղջիկը կապեցին պոչը, սեապեցին լեառը. մենծ կտորը անկաճը մընընց:

Թագավորը իմաց էղավ. աղջիկն ու տղան տե իմա ազապ ին, նոր հեարսնիք էրին. էրկու վարդապետով, ուքը տերտերով, իրեք հարիր տիրացուով, առին տարին ժամը, պսակեցին: